



ՄՊՀՀ մամլո հաղորդագրություն թիվ 13

Երևան, Հայաստան – ապրիլի 28, 2008

**ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը  
լիցենզավորում է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ –ի  
ծառայությունները եւ կենտրոնները**

**ԱՄՆ ՄԶԳ/ ՄՊՀՀ/ ԱՀ ԲՀԿ - Կայունության ծրագիրը մեկնարկված է**

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն ստեղծվել է 1988 թվին Երևանում: Կազմակերպությունը համայնքահեն ծառայությունների մատուցման նորարարն է Հայաստանում եւ այդ բնագավառում օրենսդրական բարեփոխումների ջատագովը: Այսօր ԲՀԿ-ն սպասարկում է 24 քաղաքների 12,000 խոցելի քաղաքացիների, այդ թվում՝ միայնակ անկարող տարեցներ, հաշմանդամներ, փախստականներ, կարիքավոր ընտանիքներ եւ գործազուրկներ: Ծառայությունների մատուցման համար Հայաստանի 8 մարզերում կազմակերպությունը հիմնել է 50 կենտրոն եւ շահառուներին սպասարկում է թե՛ իր կենտրոններում եւ թե՛ տնային այցելությունների միջոցով: 2007 թվից սկսած կազմակերպության ծառայությունների մի մասը ֆինանսավորվում է ՀՀ կառավարության «Միջնաժամկետ ծախսերի» ծրագրով, ինչպես նաեւ մի շարք տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Երևան - «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը (ԱՀ ԲՀԿ) հայտնում է, որ սույն թվի ապրիլի 28-ին ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) ԱՀ ԲՀԿ-ի սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններին տրամադրել է լիցենզիա (ԽՏ-006):

Այս առիթով ՀՀ ԱՍՀՆ նախարար Ադվան Վարդանյանն ասել է. «Ես իսկապես արժեւորում եմ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի գործունեությունը եւ կազմակերպության ձեռքբերումները համարում եմ նշանակալի: Քաղաքացիական նախաձեռնությամբ հիմնադրված այս կազմակերպությունը մեր երկրում բարեգործության եւ հատկապես սոցիալական ծառայությունների մատուցման մի փայլուն օրինակ է հանդիսանում: Մեր նախարարությունը կարելու է «Առաքելություն Հայաստան»-ի շարունակական զարգացմանն ուղղված աջակցությունը, քանի որ մեր խոցելի քաղաքացիների կյանքի բարելավումից շահում է ողջ հասարակությունը»:

Հայաստանի կառավարությունը ԱՀ ԲՀԿ-ի ծառայությունները սոցիալական ծառայությունների մատուցման արդյունավետ մոդել ճանաչելուց բացի, նաեւ իր պատրաստակամությունն է հայտնել 2009 թվին մեծացնել



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

**USAID ARMENIA, SOCIAL PROTECTION SYSTEMS  
STRENGTHENING PROJECT**

**ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Ֆինանսավորումը միջնաժամկետ ծախսերի ծրագրով՝ ծրագրում ընդգրկելով նաև ԱՀ ԲՀԿ 10 ցերեկային կենտրոնների ծախսերի մի մասը:

Նույն ժամանակահատվածի համար ԱՀ ԲՀԿ-ն նաև ծախսակիսման պայմանագրեր է կնքել տեղական ինքնակառավարման 14 մարմինների հետ:

«Սա իսկապես կարևոր իրադարձություն է ոչ միայն լոկ մեր կազմակերպության, այլև ծառայություններից օգտվող շահառուների համար: 2009 թվից ԱՀ ԲՀԿ-ի ծառայությունները ֆինանսավորող միջազգային դոնոր կազմակերպությունները նվազեցնելու են իրենց դրամահատկացումները՝ հիմք ընդունելով Հանրապետությունում տնտեսական աճի երկնիչ ցուցանիշները: Այս առումով, կազմակերպության կողմից մատուցվող համայնքահեն ծառայությունների շարունակականությունն ապահովելու խնդիրը ավելի քան հրատապ է դարձել: Քանզի պետական համակարգում նմանատիպ ծառայությունների մեծ մասի բացակայության պարագայում աջակցության դադարեցումը կնշանակի վտանգել հազարավոր շահառուների հետագա կենսագործունեությունը, իսկ ծառայությունների մատուցման վերոնշյալ կառույցները, որոնց հիմնումը ֆինանսական մեծ ներդրումներ է պահանջել, դնել փակման, ապա եւ՝ փոշիացման լուրջ սպառնալիքի տակ:

Ուստի ոչ միայն որպես հասարակական կազմակերպության նախագահ, այլև երկար տարիների ընթացքում ստեղծված եւ գործող այս ողջ համակարգի գործունեության շարունակականության պահպանման գիտակցությամբ մտահոգ քաղաքացի՝ կցանկանալի իմ խորին երախտագիտությունը հայտնել ԱՍՀՆ-ին եւ նշել, որ ԱՀ ԲՀԿ ծառայությունների եւ գործող կառույցների լիցենզավորումը զգալի առաջընթաց է դեպի ինքնաբավություն. այն հավաստում է Հայաստանի կենտրոնական եւ տեղական իշխանությունների պատրաստակամությունը՝ ներդրումներ կատարել սոցիալական ոլորտում եւ ընդլայնել համագործակցությունը ծառայություններ մատուցող կառույցների հետ», - ասում է ԱՀ ԲՀԿ նախագահ Հռիփսիմե Կիրակոսյանը:

Հանդիսանալով խոցելի խմբերին ցուցաբերվող աջակցության համակարգային մոտեցման կողմնակից՝ կազմակերպությունը ոչ միայն ուղղակի ծառայություններ է մատուցում նրանց, այլև ձգտում է նպաստել համայնքային մակարդակում սոցիալական քաղաքականության բարելավմանը եւ սոցիալական գործընկերության զարգացմանը, ինչպես նաև մասնակցում է տարեցների ազգային քաղաքականության եւ օրենսդրական բարեփոխումների մշակմանը, ինչը թույլ կտա սոցիալական ծառայությունների մատուցումը դնել առավել ինստիտուցիոնալ հիմքերի վրա՝ դրանք դարձնելով առավել հասցեական, նպատակային, արդյունավետ եւ շարունակական:



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

**USAID ARMENIA, SOCIAL PROTECTION SYSTEMS  
STRENGTHENING PROJECT**

**ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հ. Կիրակոսյանը իր երախտագիտությունը հայտնեց նաև ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալությանը (ԱՄՆՄԶԳ) եւ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՄՊՀՀ) ծրագիրն իրականացնող «Դը Սերվիսիս Գրուփ» կազմակերպությանը եւ նշեց. «Խոսքը ոչ միայն ֆինանսական օժանդակության մասին է, այլև մասնագիտական այն աջակցության, որը վերջիվերջո մեզ հնարավորություն կտա դառնալ ինքնաբավ»:

ԱՄՆ ՄԶԳ-ն, կազմակերպության գլխավոր աջակիցը, իսկ բոլորովին վերջերս նաև ՄՊՀՀ-ն ԱՀ ԲՀԿ-ի կայունության զարգացմանը նպաստող գործընթաց են սկսել, որը կազմակերպությանը կօգնի է՛լ ավելի զարգացնել իր կարողությունները եւ արդյունքում՝ ավելի քիչ կախյալ դառնալ արտաքին ֆինանսավորումից:

Այս ամիս ԱՀ ԲՀԿ-ն ծրագրել է համագործակցություն սկսել անհատական եւ հավաքական դոնորների հետ թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում՝ նպատակ ունենալով կազմակերպության կայունության զարգացման գործում հանրության ավելի մեծ ներգրավվածություն ապահովել:

«Այսօր մեր նպատակն է ոչ միայն որակով եւ բազմատեսակ ծառայություններ մատուցել, այլև դրանք պահպանել, քանի որ մեր խոցելի բնակչության կարիքներն ահռելի են», - ասում է Հ. Կիրակոսյանը: «Նպաստելով Հայաստանում հանրության միասնական պատասխանատվության բարձրացմանը եւ Սփյուռքում հավանական աջակիցներ գտնելուն՝ մենք նպատակ ունենք նրանց այս խնդրի լուծման ակտիվ մասնակիցը դարձնել»:

Հ.Կիրակոսյանը իր խոսքի վերջում մեկ անգամ եւս շեշտեց, որ ԱՀ ԲՀԿ-ի ծառայությունները նպատակ ունեն ապահովել շահառուների ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական բարեկեցությունը:

«Գերագույն բանը, որ ձգտում ենք նրանց ընձեռել, հույսն է, ինքնարժեքությունը, անկախությունը եւ արժանապատվությունը», - հավելեց նա:

Ամբողջական տեղեկատվության համար, այցելեք [www.mission.am](http://www.mission.am) կամ [www.spss.am](http://www.spss.am):